


Հայաստանի բնության
հատուկ պահպանվող
սարածքները
և անտառները

Specially Protected
Nature Areas
and Forests
of Armenia





Austrian
Development Cooperation



Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները և անտառները

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները և անտառները
(WWF-Հայաստան, 2012, - 52 էջ:)

ISBN 978-99941-2-701-6

ՀՏԴ 502/504 ՊՄԴ 20.1 Հ 247

© WWF-Հայաստան, 2012

«Արտ Սայթ» ՍՊԸ

Տեքստը պատրաստեցին Սիրանուշ Գալստյանը և Գեռա Ոսկանյանը
Դիզայնը՝ Ն. Մելիքյանի



Austrian
Development Cooperation

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրամիության և Ավստրիական զարգացման համագործակցության կողմից ֆինանսավորվող «Անտառային օրենսդրության կիրառման և անտառային ոլորտի կառավարման բարելավում Եվրոպական հարևանության քաղաքականության արևելյան երկրներում և Ռուսաստանում» (ENPI-FLEG) տարածաշրջանային ծրագրի շրջանակներում որպես WWF հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացված գործողություն: Հրատարակությունում զետեղված բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն WWF հայաստանյան մասնաճյուղը: Հրատարակության բովանդակությունը որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության, Ավստրիական զարգացման համագործակցության կամ ծրագրի գործընկերների տեսակետները:

Բովանդակություն

Ներածություն	3
Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները	4
Պետական արգելոցներ	5
Ազգային պարկեր	10
Պետական արգելավայրեր	16
Հայաստանի անտառները	25
Գրականություն	26

Ներածություն

Հայաստանը լեռնային երկիր է, որին բնորոշ է բույսերի և կենդանիների, ինչպես նաև լանդշաֆտների և բուսականության տիպերի հարուստ բազմազանությունը: Հայաստանի փոքր տարածքում աճում են բարձրակարգ ծաղկավոր բույսերի ավելի քան 3500 տեսակ, իսկ կենդանիների թիվն ավելի է, քան 17500 տեսակը՝ ներառյալ 536 ողնաշարավոր: Հայաստանի կարմիր գրքում գրանցված են բարձրակարգ բույսերի 452 տեսակ, սնկերի 40 տեսակ, ողնաշարավոր կենդանիների 153 և անողնաշարավոր կենդանիների 155 տեսակ, իսկ մի շարք տեսակներ ընդգրկված են ԲՊՄՄ/ՄԿՆ կարմիր ցուցակում:

Հայաստանի հարուստ կենսաբազմազանության պահպանության համար կարևոր նշանակություն ունեն բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ)՝ պետական արգելոցները, ազգային պարկերը, պետական արգելավայրերը և բնության հուշարձանները: ԲՀՊՏ-ների նպատակն է ապահովել բույսերի և կենդանիների (էնդեմ, ռելիկտ, հազվագյուտ, վտանգված և այլ տեսակներ) պահպանությունն իրենց բնական միջավայրերում: Հայաստանի բազմաթիվ ԲՀՊՏ-ներ ստեղծվել են անտառների, ինչպես նաև դրանց բնորոշ բույսերի և կենդանիների տեսակների պահպանության համար:

Անտառները մեծ կարևորություն ունեն Հայաստանի համար: Անտառներն արտադրում են մարդու և կենսոլորտի համար կենսական նշանակություն ունեցող թթվածին: Դրանք ունեն Հայաստանի նման լեռնային երկրի համար շատ կարևոր հողապաշտպան և հակաէրոզիոն նշանակություն: Անտառներն ունեն նաև մեծ տնտեսական դեր՝ հանդիսանալով բնափայտի և ոչ բնափայտային արտադրանքի (ուտելի, դեղատու, մեղրատու և մարդու համար այլ օգտակար հատկություններով օժտված բույսեր, սնկեր և այլ տեսակներ) աղբյուր: Կարևոր է անտառի նշանակությունը ռեկրեացիայի և զբոսաշրջության համար: Այն ունի նաև գիտահետազոտական և ուսուցողական նշանակություն, հոգևոր և գեղագիտական արժեք:

Այս հրատարակության նպատակն է հակիրճ ներկայացնել Հայաստանի ԲՀՊՏ-ները և անտառները: Այն կազմված է երկու մասից՝ քարտեզից և գրքուկից: Քարտեզը ցուցադրում է Հայաստանի ԲՀՊՏ-ները և անտառները, իսկ գրքուկում տրվում են հակիրճ տեղեկություններ դրանց մասին:

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները

Հայաստանում ԲՀՊՏ-ների համակարգի ստեղծումն սկսվել է 1958թ-ին, երբ հիմնադրվել են առաջին պահպանվող տարածքները՝ 3 արգելոցներ և 6 արգելավայրեր: Ներկայումս Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգում ընդգրկված են 4 կատեգորիայի պահպանվող տարածքներ.

- պետական արգելոցներ (3),
- ազգային պարկեր (4),
- պետական արգելավայրեր (26),
- բնության հուշարձաններ (230):

ԲՀՊՏ-ներն օրենքով առանձնացված տարածքներ և առանձին բնական օբյեկտներ են, որոնք ներկայացնում են հատուկ բնապահպանական, գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջային, գեղագիտական արժեք և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ: Ներկայումս ԲՀՊՏ-ները Հայաստանում զբաղեցնում են մոտ 380 հազար հա, որը կազմում է Հայաստանի տարածքի մոտ 12,5 % (ներառյալ Սևանա լճի մակերեսը):

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՅՆԵՐ



«Խոսրովի անտառ» արգելոց
© WWF Հայաստան / Ա.Սալխասյան

«Խոսրովի անտառ» պետական արգելոց

Ստեղծվել է.	1958 թ.
Տարածքը.	23213 հա
Տեղադիրքը.	Արարատի մարզ
Բարձրությունը.	700 - 2800 մ ծովի մակարդակից բարձր

■ **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** չոր, նոսրանտառային, ֆրիգանային և կիսաանապատային լանդշաֆտների, բուսական և կենդանական եզակի համակեցությունների պահպանություն, այդ թվում կովկասյան ընձառյուծի, բեզուրյան այծի, գորշ արջի, սև անգղի, կասպիական հնդկահավի, հայկական իծի և այլ տեսակների պահպանություն: Արգելոցն աճելավայր է 1849 տեսակ անոթավոր բույսերի համար (Հայաստանի ֆլորայի կեսից ավելին), ներառյալ 24 էնդեմ, և ապրելավայր է 283 տեսակ ողնաշարավոր կենդանիների համար, ներառյալ ԲՊՄՍ կարմիր ցուցակում գրանցված 11 տեսակ:



■ **Անտառները.** ընդհանուր 4131 հեկտար անտառածածկ մակերես, հիմնականում գիհու և կաղնու նոսրանտառներ, երբեմն կաղնու բավական խիտ միատարր անտառներ, գիհու և կաղնու գերակշռությամբ խառն անտառներ՝ այլ տեսակների մասնակցությամբ, այլ տեսակներով ներկայացված նոսրանտառներ և այլն:

■ **Էկոտուրիզմի հնարավորությունները.** արգելոցն ունի այցելուների երկու կենտրոն Գառնու և Վեդիի տեղամասերում, ուր զբոսաշրջիկներին տրամադրվում են տարբեր ծառայություններ, այդ թվում, հետիոտն, հեծանվային և ձիով արշավներ, վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտում, թռչնադիտում, պատմամշակութային վայրերի այցելություններ և այլն:



Այցելուների կենտրոն Գառնու տեղամասում
© WWF Հայաստան / Ա.Մալխասյան

«Էրեբունի» պետական արգելոց

Ստեղծվել է.	1981 թ.
Տարածքը.	89 հա
Տեղադիրքը.	Կոտայքի մարզ
Բարձրությունը.	1300 - 1400 մ ծովի մակարդակից բարձր



«Էրեբունի» արգելոց
© Ն. Խանջյան

■ **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** Լեռնային քսերոֆիտ էնդեմների և եզակի բնական համալիրների պահպանություն: Տարածքով փոքր, սակայն նշանակությամբ ամենակարևոր պահպանվող տարածքներից է, քանի որ պահպանում է վայրի հացազգիների աշխարհում եզակի գենոֆոնդը: Արգելոցն աճելավայր է 293 տեսակ անոթավոր բույսերի համար, որոնցից մոտ 40-ը մշակովի բույսերի վայրի ազգակիցներ են, ներառյալ աշխարհում հայտնի վայրի ցորենի 4 տեսակներից 3-ը (ավելի քան 100 տարատեսակներով), աշորայի, գարու և այծակնի բազմաթիվ տեսակներ, բազմաթիվ այլ հազվագյուտ և անհետացող տեսակներ: Արգելոցն ապրելավայր է մոտ 90 տեսակ ողնաշարավոր կենդանիների համար:

«Շիկահող» պետական արգելոց

Ստեղծվել է.

1958 թ.

Տարածքը.

12137 հա

Տեղադիրքը.

Սյունիքի մարզ

Բարձրությունը.

700 - 2400 մ ծովի մակարդակից բարձր



«Շիկահող» արգելոց

© WWF Հայաստան / Ա.Սալխասյան

■ **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** կաղնուտա-բոխուտային անտառների և դրանց բնորոշ բուսական և կենդանական համակեցությունների, կենու և սոսիի պուրակների, կովկասյան ընծառուծի, բեզոարյան այծի, գորշ արջի, կովկասյան մարեհավի, կասպիական հնդկահավի, հայկական իժի և այլ տեսակների պահպանություն: Արգելոցն աճելավայր է 1074 տեսակ անոթավոր բույսերի և 208 տեսակ ողնաշարավոր կենդանիների, ներառյալ ԲՊՄՄ կարմիր ցուցակում գրանցված 8 տեսակի համար:

■ **Անտառները.** կաղնուտներ, բոխուտներ, կաղնու և բոխու խառն անտառներ՝ այլ տեսակների մասնակցությամբ, հարավային Հայաստանում արևելյան հաճարենու միակ փոքր անտառակը, կենու և արևելյան սոսիի ծառերի խմբեր կամ առանձին ծառեր, Ծավ գետի աջ ափին Մթնածորի կիրճում պահպանվել է մարդու միջամտությունից զերծ մնացած կաղնու հրաշալի անտառը:

■ **Եկոտուրիզմի հնարավորությունները.** արգելոցն ունի այցելուների կենտրոն, որը գտնվում է արգելոցի վարչական շենքում, ուր զբոսաշրջիկներին տրամադրվում են տարբեր ծառայություններ, այդ թվում, հետիոտն, հեծանվային և ձիով արշավներ, վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտում, թռչնադիտում, պատմամշակութային վայրերի այցելություններ և այլն:



«Շիկահող» արգելոց
© WWF Հայաստան / Ի.Խորոզյան

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԵՐ

«Արփի լիճ» ազգային պարկ

Ստեղծվել է.	2009 թ.
Տարածքը.	21179 հա
Տեղադիրքը.	Շիրակի մարզ
Բարձրությունը.	1500 - 3100 մ ծովի մակարդակից բարձր

■ **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** Ջավախք-Շիրակ բարձրավանդակի և Արփի լճի ավազանի կենսաբազմազանության, մարգագետնատափաստանային, մերձալպյան մարգագետնային և խոնավ տարածքների էկոհամակարգերի, չվող թռչունների բնադրավայրերի և հանգստատեղերի, բնության հուշարձանների պահպանություն: Ազգային պարկն աճելավայր է 670 տեսակ անոթավոր բույսերի, այդ թվում, Կովկասի և Հայաստանի մի շարք էնդեմների համար, ինչպես նաև ապրելավայր է 255 տեսակ ողնաշարավոր կենդանիների, այդ թվում ԲՊՄՄ կարմիր ցուցակում գրանցված ավելի քան 10 տեսակի համար (ջրասամույր, խայտաքիս, Դարևակու իժ, տափաստանային հողմավար բագե և այլն): Տարածքում բնակվում է հայկական որորի ամենամեծ գաղութն աշխարհում, այն գանգրափետուր հավալուսնի միակ բնադրավայրն է Հայաստանում և Դարևակու իժի միակ ապրելավայրն աշխարհում:



«Արփի լիճ» ազգային պարկ
© WWF Հայաստան / Ա. Խոյեցյան



«Արփի լիճ» ազգային պարկ
© WWF Հայաստան / Ա. Մալխասյան

■ **Անտառները.** սոճու, բարդու և կաղամախու տնկարկներ, Ախուրյան գետի կիրճում բնական կաղամախու անտառապատ հատված, գաճաճ գիհուտներ, թփուտային տարածքներ և այլն:

■ **Էկոտուրիզմի հնարավորությունները.** ազգային պարկն ունի այցելուների կենտրոն և հյուրատուն: Այցելուների կենտրոնը գտնվում է ազգային պարկին կից Ղազանչի համայնքում, իսկ հյուրատունը գտնվում է Բերդաշեն համայնքում՝ ազգային պարկի վարչական շենքի հարևանությամբ: Այցելուների կենտրոնում զբոսաշրջիկներին տրամադրվում են տարբեր ծառայություններ, այդ թվում՝ հետիոտն և ձիով արշավներ, թռչնադիտում, դահուկային սպորտաձևի հնարավորություններ և այլն:

«Դիլիջան» ազգային պարկ

Ստեղծվել է.	2002 թ. (1958թ-ին ստեղծված «Դիլիջան» պետական արգելոցի հիման վրա)
Տարածքը.	33765 հա
Տեղադիրքը.	Տավուշի մարզ
Բարձրությունը.	1070 - 2400 մ ծովի մակարդակից բարձր

■ **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** հաճարենու և կաղնու մեզոֆիլ անտառների, կենու եզակի պուրակի, կովկասյան մարեհավի, գորշ արջի և այլ տեսակների, ինչպես նաև, բնական և պատմաճարտարապետական հուշարձանների պահպանություն: Ազգային պարկն աճելավայր է 977 տեսակ անոթավոր բույսերի համար, որոնցից 5-ը Հայաստանի էնդեմներ են և ապրելավայր է ավելի քան 220 տեսակ ողնաշարավոր կենդանիների համար:

■ **Անտառները.** մեզոֆիլ անտառներ՝ կաղնուտներ, հաճարկուտներ և բոխուտներ, կաղնու, հաճարենու և բոխու խառն անտառներ՝ այլ տեսակների մասնակցությամբ, սոճու և գիհու անտառների կղզյակներ, կենու առանձնյակներ և այլն:



«Դիլիջան» ազգային պարկ, Պարզ լիճ
© «Դիլիջան» ազգային պարկ



«Դիլիջան» ազգային պարկ
© «Դիլիջան» ազգային պարկ

■ **Էկոտուրիզմի հնարավորությունները.** ազգային պարկն ունի այցելուների կենտրոն, որը գտնվում է ազգային պարկի վարչական շենքի հարևանությամբ, ուր զբոսաշրջիկներին տրամադրվում են տարբեր ծառայություններ, այդ թվում, հետիոտն, հեծանվային և ձիով արշավներ, վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտում, թռչնադիտում, պատմամշակութային վայրերի այցելություններ և այլն:

«Սևան» ազգային պարկ

Ստեղծվել է.	1978 թ.
Տարածքը.	147456 հա (առանց Սևանա լճի մակերեսի՝ 22697 հա)
Տեղադիրքը.	Գեղարքունիքի մարզ
Բարձրությունը.	2000 մ ծովի մակարդակից բարձր

■ **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** կարևորագույն բարձր լեռնային լճային էկոհամակարգի, էնդեմ ձկների (Սևանի իշխան, Սևանի բեղլու, Սևանի կողակ), բույսերի և կենդանիների տեսակների, այդ թվում էնդեմ հայկական որորի, չվող ջրլող թռչունների հանգստատեղերի պահպանություն: Ազգային պարկն աճելավայր է 1145 տեսակ անոթավոր բույսերի (այդ թվում Յայաստանի 3 և Սևանա լճի 5 էնդեմի) և ողնաշարավոր կենդանիների 336 տեսակի համար:

■ **Անտառները.** մնացորդային կաղնուտներ և գիհու մոսրամտառներ՝ չորասեր թփերի և տափաստանային խոտաբույսերի մասնակցությամբ, թփուտային տարածքներ, արհեստական տնկարկներ (սոճի, չիչխան, բարդի և այլն) ջրից ազատված տարածքներում, որոնք ջրի մակարդակի բարձրացման արդյունքում աստիճանաբար մաքրվում են:

■ **Էկոտուրիզմի հնարավորությունները.** ազգային պարկի տարածքում զբոսաշրջիկներին տրամադրվում են տարբեր ծառայություններ, այդ թվում հետիոտն, հեծանվային և ձիով արշավներ, վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտում, թռչնադիտում, պատմամշակութային վայրերի այցելություններ և այլն:



«Սևան» ազգային պարկ
© ՀՀ բնապահպանության նախարարություն

«Արևիկ» ազգային պարկ

Ստեղծվել է.	2009 թ.
Տարածքը.	34401 հա, ներառյալ «Բողաքար» արգելավայրը
Տեղադիրքը.	Սյունիքի մարզ
Բարձրությունը.	650 - 3000 մ ծովի մակարդակից բարձր



«Արևիկ» ազգային պարկ
© WWF Հայաստան / Ա.Մալխասյան

■ **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** «Բողաքար» արգելավայրի, Մեղրու բնորոշ լեռնային ֆլորիստիկ շրջանի, Մեղրու և Ջանգեզուրի լեռնաշղթաների լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, էնդեմ, հազվագյուտ և վտանգված տեսակների, դրանց կենսավայրերի, բնապատմական ժառանգության պահպանություն, կովկասյան ընձառյուծի, բեզուարյան այծի, հայկական մուֆլոնի, գորշ արջի, ջրասամույրի, կասպիական հնդկահավի, կովկասյան մարեհավի, հայկական իժի և այլ տեսակների պահպանություն: Ազգային պարկն աճելավայր է ավելի քան 1500 տեսակ անոթավոր բույսերի համար, որոնցից 31 էնդեմ են, 92-ը գրանցված են ՀՀ կարմիր գրքում, իսկ 6-ը՝ ԲՊՄՍ կարմիր ցուցակում: Արգելոցն ապրելավայր է 245 տեսակ ողնաշարավոր կենդանիների, ներառյալ ԲՊՄՍ կարմիր ցուցակում գրանցված 11 տեսակի համար:

■ **Անտառները.** գիհու նոսրանտառներ, կաղնու անտառներ և նոսրանտառներ, համդիպում են նաև բոխի, թխկի, հացենի և այլ տեսակներ:

■ **Էկոտուրիզմի հնարավորությունները.** հետիոտն և ձիով արշավներ (ազգային պարկի հարակից համայնքներում տրամադրվում են վարձու ձիեր), վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտում, թռչնադիտում, պատմամշակութային վայրերի այցելություններ:

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐ

«Զիկատար» արգելավայր

Ստեղծվել է.	2010 թ.
Տարածքը.	150 հա
Տեղադիրքը.	Տավուշի մարզ
Բարձրությունը.	1150 - 1450 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** անտառային բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության պահպանություն:
- **Էկոտուրիզմի հնարավորությունները.** արգելավայրն ունի այցելուների կենտրոն, ուր զբոսաշրջիկներին տրամադրվում են տարբեր ծառայություններ, այդ թվում հետիոտն, հեծանվային և ձիով արշավներ, վայրի կենդանական և բուսական աշխարհի դիտում, թռչնադիտում, պատմամշակութային վայրերի այցելություններ և այլն:

«Գյուլագարակի» արգելավայր

Ստեղծվել է.	1958 թ.
Տարածքը.	2576 հա
Տեղադիրքը.	Լոռու մարզ
Բարձրությունը.	1400 - 1900 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** սոճու դարավոր անտառների (կան 130-150 տարեկան ծառեր), արժեքավոր ծառատեսակների և հազվագյուտ անտառային խոտաբույսերի պահպանություն

«Իջևանի» արգելավայր

Ստեղծվել է.	1971 թ.
Տարածքը.	5908 հա
Տեղադիրքը.	Տավուշի մարզ
Բարձրությունը.	900 - 2100 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** հազվագյուտ և արժեքավոր անտառային կենդանիների պահպանություն:

«Արջատիլենու» արգելավայր

Ստեղծվել է.	1958 թ.
Տարածքը.	40 հա
Տեղադիրքը.	Տավուշի մարզ
Բարձրությունը.	1500 - 1800 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** ռելիկտային արջատիլենու և կենու պուրակների պահպանություն

«Գանձարարի-Վերին Աղդանի» արգելավայր

Ստեղծվել է.	1971 թ.
Տարածքը.	6813 հա
Տեղադիրքը.	Տավուշի մարզ
Բարձրությունը.	1500 - 2000 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** լեռնային անտառների, հազվագյուտ և արժեքավոր անտառային տեսակների պահպանություն:

«Մարգահովտի» արգելավայր

Ստեղծվել է.	1971 թ.
Տարածքը.	2814 հա
Տեղադիրքը.	Լոռու մարզ
Բարձրությունը.	1900 - 2200 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** անտառային կենդանիների պահպանություն

«Հանքավանի ջրաբանական» արգելավայր

Ստեղծվել է.	1981 թ.
Տարածքը.	5202 հա
Տեղադիրքը.	Կոտայքի մարզ
Բարձրությունը.	2000 - 2300 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** «Հանքավան» հանքային ջրի սնման ավազանի պահպանություն:

«Կովկասյան մրտավարդի» արգելավայր

Ստեղծվել է.	1959 թ.
Տարածքը.	761 հա
Տեղադիրքը.	Լոռու մարզ
Բարձրությունը.	1900 - 2200 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** կովկասյան մրտավարդենու պահպանություն:

«Ախնաբադի կենու պուրակ» արգելավայր

Ստեղծվել է.	1959 թ.
Տարածքը.	25 հա
Տեղադիրքը.	Տավուշի մարզ
Բարձրությունը.	1400 - 1700 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** ռելիկտային կենու եզակի պուրակի պահպանություն:

«Գետիկի» արգելավայր

Ստեղծվել է.	1971 թ.
Տարածքը.	5728 հա
Տեղադիրքը.	Գեղարքունիքի մարզ
Բարձրությունը.	1500 - 2700 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** լեռնային անտառների, հազվագյուտ և արժեքավոր անտառային կենդանիների պահպանություն:

«Արգական-Մեղրաձորի» արգելավայր

Ստեղծվել է.	1971 թ.
Տարածքը.	13532 հա
Տեղադիրքը.	Կոտայքի մարզ
Բարձրությունը.	1600 - 2100 մ ծովի մակարդակից բարձր

- Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները. հազվագյուտ և արժեքավոր անտառային կենդանիների պահպանություն:

«Բանքսի սոճու» արգելավայր

Ստեղծվել է.	1959 թ.
Տարածքը.	4 հա
Տեղադիրքը.	Կոտայքի մարզ
Բարձրությունը.	1800 - 2000 մ ծովի մակարդակից բարձր

- Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները. Բանքսի սոճու եզակի պուրակի պահպանություն:

«Արագածի ալպյան» արգելավայր

Ստեղծվել է.	1959 թ.
Տարածքը.	300 հա
Տեղադիրքը.	Արագածոտնի մարզ
Բարձրությունը.	3200 - 3350 մ ծովի մակարդակից բարձր

- Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները. «Քարե» լճի և շրջապատող ալպյան մարգագետինների պահպանություն:

«Գիհու նոսրանտառային» արգելավայր

Ստեղծվել է.	1958 թ.
Տարածքը.	3312 հա
Տեղադիրքը.	Գեղարքունիքի մարզ
Բարձրությունը.	2000 - 2300 մ ծովի մակարդակից բարձր

- Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները. գիհու և կաղնու նոսրանտառների, բնորոշ բուսական և կենդանական համակեցությունների պահպանություն:

«Արարատի որդան կարմիր» արգելավայր

Ստեղծվել է.	1987 թ.
Տարածքը.	219 հա
Տեղադիրքը.	Արմավիրի մարզ
Բարձրությունը.	850 - 1000 մ ծովի մակարդակից բարձր



«Արարատի որդան կարմիր» արգելավայր
© Ա. Աղասյան

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** որդան կարմիր միջատի և բնորոշ կիսանապատային բուսականության, եզակի բուսական համակեցությունների պահպանություն:

«Խոր Վիրապ» արգելավայր

Ստեղծվել է.	2007 թ.
Տարածքը.	50 հա
Տեղադիրքը.	Արարատի մարզ
Բարձրությունը.	800 - 900 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** ջրաճահճային էկոհամակարգերի և բնորոշ բույսերի ու կենդանիների տեսակների պահպանություն:

«Գոռավանի ավազուտներ» արգելավայր

Ստեղծվել է.	1959 թ.
Տարածքը.	95 հա
Տեղադիրքը.	Արարատի մարզ
Բարձրությունը.	1100 - 1200 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** ավազուտային էկոհամակարգի, եզակի բուսական և կենդանական տեսակների պահպանություն:

«Նդեգիսի» արգելավայր

Ստեղծվել է.	1971 թ.
Տարածքը.	4200 հա
Տեղադիրքը.	Վայոց Ձորի մարզ
Բարձրությունը.	1200 - 2800 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** հազվագյուտ և արժեքավոր կենդանիների տեսակների, վայրի ցորենի պահպանություն:

«Զերմուկի ջրաբանական» արգելավայր

Ստեղծվել է.	1981 թ.
Տարածքը.	17371 հա
Տեղադիրքը.	Վայոց Ձորի մարզ
Բարձրությունը.	1900 - 2100 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** «Զերմուկ» հանքային ջրի սնման ավազանի պահպանություն:

«Զերմուկի անտառային» արգելավայր

Ստեղծվել է.	958 թ.
Տարածքը.	3865 հա
Տեղադիրքը.	Վայոց Ձորի մարզ
Բարձրությունը.	1100 - 2800 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** լեռնային անտառների և հազվագյուտ կենդանիների պահպանություն:

« Հերերի նուրանտառային » արգելավայր

Ստեղծվել է.	1958 թ.
Տարածքը.	6139 հա
Տեղադիրքը.	Վայոց Ձորի մարզ
Բարձրությունը.	1400 - 2000 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** ռելիկտային գիիու նուրանտառների և տրագականտային բուսականության պահպանություն:

« Սև լիճ » արգելավայր

Ստեղծվել է.	2001 թ.
Տարածքը.	240 հա
Տեղադիրքը.	Սյունիքի մարզ
Բարձրությունը.	2658 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** հրաբխային ծագման բարձր լեռնային լճի, հարակից բուսական և կենդանական համակեցությունների, ալպյան մարգագետինների պահպանություն:

« Գորիսի » արգելավայր

Ստեղծվել է.	1972 թ.
Տարածքը.	1838 հա
Տեղադիրքը.	Սյունիքի մարզ
Բարձրությունը.	1400 - 2800 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** անտառային էկոհամակարգերի, վտանգված բույսերի և կենդանիների տեսակների պահպանություն:

« Զանգեզուր » արգելավայր

Ստեղծվել է.	2009 թ.
Տարածքը.	17368 հա
Տեղադիրքը.	Սյունիքի մարզ
Բարձրությունը.	2100 - 3900 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** ենթալպյան մարգագետինների և մարգագետնատափաստանային էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, հազվագյուտ և վտանգված բույսերի և կենդանիների տեսակների պահպանություն:



«Ջանգեզուր» արգելավայր
© WWF Հայաստան / Ա.Սալխասյան

«Բողաքարի» արգելավայր

Ստեղծվել է.	1989 թ.
Տարածքը.	2728 հա
Տեղադիրքը.	Սյունիքի մարզ
Բարձրությունը.	1400 - 2100 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** բույսերի և կենդանիների էնդեմ և հազվագյուտ տեսակների պահպանություն:

«Սոսու պուրակ» արգելավայր

Ստեղծվել է.	1958 թ.
Տարածքը.	64 հա
Տեղադիրքը.	Սյունիքի մարզ
Բարձրությունը.	700 - 750 մ ծովի մակարդակից բարձր

- **Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները.** Կովկասում միակ արևելյան սոսու բնական պուրակի պահպանություն:



«Սոսու պուրակ» արգելավայր
© WWF Հայաստան / Ա. Խոյեցյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՌՆԵՐԸ

Հայաստանի անտառային տարածքները սահմանափակ են, ինչը պայմանավորված է երկրի աշխարհագրական դիրքով, բնակլիմայական պայմաններով, մարդու գործունեությամբ և այլ գործոններով: Ներկայումս Հայաստանում անտառային հողերը կազմում են 344,2 հազ. հա, որից անտառածածկ տարածքները՝ 277,1 հազ. հա: Բնական գործոնների բացասական ազդեցության և գերշահագործման արդյունքում Հայաստանի անտառային էկոհամակարգերն զգալի վնասվել են:

Հայաստանի անտառները լեռնային են, ունեն արտահայտված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն: Մեծ է անտառների սոցիալ-տնտեսական դերը: Հայաստանի անտառներն ունեն նաև գիտական բարձր արժեք և հարուստ կենսաբազմազանություն:

Անտառները Հայաստանում հիմնականում տարածված են երկրի հյուսիսային և հարավային շրջաններում: Կենտրոնական Հայաստանը գրեթե անտառազուրկ է, այնտեղ անտառները ներկայացված են առանձին կղզյակների կամ չորասեր նոսրանտառների տեսքով:

Հայաստանում գերակշռում են լայնատերև անտառները: Հիմնական անտառակազմող ծառատեսակներն են հաճարենին, կաղնին և բոխին, որոնք կազմում են ինչպես միատարր համակեցություններ՝ հաճարկուտներ, կաղնուտներ և բոխուտներ, այնպես էլ խառն անտառներ՝ այլ անտառային ծառատեսակների ուղեկցությամբ:

Հայաստանում անտառները տարածված են 500-2400 մ բարձրությունների վրա: Կարելի է առանձնացնել անտառների չորս հիմնական տիպեր: Կաղնուտները լայնորեն տարածված են Հայաստանում. որպես ուղեկցող տեսակներ կաղնուտներում հանդիպում են հացենին, բոխին, թխկին, թեղին և այլն: Հաճարկուտները, որտեղ գերակշռում է արևելյան հաճարենին, նույնպես լայնորեն տարածված են հատկապես, հյուսիսային Հայաստանում 1000 - 2100 մ բարձրությունների վրա. որպես ուղեկցող տեսակներ հաճարկուտներում հանդիպում են լորենին, իլենին և այլ տեսակներ: Բոխու անտառներն ավելի քիչ են տարածված, հիմնականում 800-1800 մ բարձրությունների վրա. որպես ուղեկցող տեսակներ բոխուտներում հանդիպում են թխկին, թեղին, տանձենին, խնձորենին և այլ տեսակներ: Չոր նոսրանտառները հանդիպում են երկրի ինչպես հյուսիսային (900-1000 մ բարձրությունների վրա), այնպես էլ հարավային (1800 - 2000 մ բարձրությունների վրա) հատվածներում, որտեղ աճում են չորասեր ծառաթփային տեսակներ (օրինակ, գիհու տարբեր տեսակներ):

Գրականություն

1. Ա.Գևորգյան, Ա.Աղասյան «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տրաածքների համակարգի ներկա վիճակը», Երևան, 2008:
2. «Արփի լիճ» ազգային պարկի կառավարման պլան, 2011-2015:
3. «Դիլիջան» ազգային պարկի կառավարման պլան, 2007-2011:
4. «Խոսրովի անտառ» արգելոց, WWF - Հայաստան, Ն. Խանջյան, 2009:
5. «Խոսրովի անտառ» պետական արգելոցի կառավարման պլան, 2010-2014:
6. Հայաստանի կենսաբազմազանությունը, Առաջին ազգային զեկույց, 1999:
7. Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գիրք (բարձրակարգ բույսեր և սնկեր): Երկրորդ հրատարակություն: 2010, Երևան:
8. Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրք (անողնաշար և ողնաշարավոր կենդանիներ): Երկրորդ հրատարակություն: 2010: Երևան:
9. ՀՀ Անտառի ազգային ծրագիր, 2005:
10. «Հյուսիսային Հայաստանի անտառային բարիքները», WWF-Հայաստան, Ն. Խանջյան, 2012:
11. Ն.Խանջյան, «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները», 2004:
12. «Շիկահող» պետական արգելոցի կառավարման պլանի նախագիծ, 2009:
13. «Սևան» ազգային պարկի կառավարման պլան, 2007-2011:
14. Заповедники Кавказа, Москва, “Мысль”, 1990.
15. www.hayantar.am



Specially Protected Nature Areas and Forests of Armenia

Specially Protected Nature Areas and Forests of Armenia, Yerevan 2012, 52 p.

ISBN 978-99941-2-701-6

© WWF-Armenia, 2012

Text prepared by Siranush Galstyan and Gera Voskanyan

Design by N. Melikyan



This publication has been produced in the framework of the regional project Improving Forest Law Enforcement and Governance in the European Neighborhood Policy East Countries and Russia (ENPI FLEG) financed by the European Union and the Austrian Development Cooperation as an activity implemented by WWF-Armenia. The contents of this publication are the sole responsibility of WWF-Armenia and can in no way be taken to reflect the views of the European Union, the Austrian Development Cooperation or the Implementing Organisations.

CONTENTS

Introduction	29
Specially Protected Nature Areas of Armenia	30
State Reserves	31
National Parks	35
State Sanctuaries	40
Forests of Armenia	48
References	49

Introduction

Armenia is a mountainous country characterized by rich diversity of plants and animals as well as landscapes and types of vegetation. On the small territory of Armenia there are more than 3500 species of high vascular plants and more than 17500 species of animals including 536 species of vertebrates. In the Red Book of Armenia there are 452 species of higher plants, 40 species of fungi, 153 species of vertebrates and 155 species of invertebrates; a number of species are registered in the IUCN Red List.

Specially protected nature areas (SPNA) – state reserves, national parks, state sanctuaries and natural monuments are crucial for protection of rich biodiversity of Armenia. They are aimed at protection of plants and animals (endemics, relict, rare, threatened and other species) in their natural habitats. A number of SPNAs in Armenia were established for protection of forests with typical plants and animals.

Forests are very important for Armenia. They produce oxygen having vital significance for human and biosphere. They are crucial for protection of soils and prevention of erosion, which is so important for a mountainous country like Armenia. The economic significance of forests is also big. They are a source of timber and non-timber forest products (edible, medicinal, honey-producing and other plants, mushrooms and other species having useful properties for human). They are also important for recreation and tourism. Forests are used for scientific-research and educational purposes as well as have spiritual and aesthetic values.

The aim of this publication is to present briefly the SPNAs and forests of Armenia. It consists of two parts – a map and a brochure. The map demonstrates the SPNAs and forests of Armenia and the brochure provides brief information on SPNAs and forests.

Specially Protected Nature Areas of Armenia

The establishment of a system of SPNAs in Armenia started in 1958, when the first protected areas (3 reserves and 6 sanctuaries) were established. At present the system of SPNAs in Armenia includes 4 categories of protected areas:

- State Reserves (3)
- National Parks (4)
- State Sanctuaries (26), and
- Natural Monuments (230).

The SPNAs are the areas and separate natural objects designated by the law and having special nature protection, scientific, educational, health protection, historical-cultural, recreational, tourism and aesthetic values with established special protection regime.

At present the SPNAs of Armenia occupy about 380 thousand ha making about 12,5% (including Lake Sevan) of the territory of Armenia.

STATE RESERVES



“Khosrov Forest” Reserve
©WWF-Armenia / A.Malkhasyan

Khosrov Forest State Reserve

Established:	1958
Area:	23213 ha
Location:	Ararat Marz
Altitude:	700 - 2800 m above sea level

■ **Aim of establishment, protection objects:** Protection of dry, open woodland, phrygana and semidesert landscapes, unique plant and animal associations, including protection of Caucasian leopard, Bezoar goat, brown bear, black vulture, Caspian snowcock, Armenian viper and other species. The reserve is a habitat for 1849 species of high vascular plants (more than the half of the flora of Armenia) including 24 endemics, and 283 species of vertebrates, including 11 species registered in the IUCN Red List.



■ **Forests:** Totally 4131 ha of forested area, mainly juniper and oak open woodlands, sometimes rather dense oak forests, mixed forests with prevalence of juniper and oak, open woodlands represented by other species and others.

■ **Ecotourism opportunities:** There are two Visitor Centers in Garni and Vedi tracts of the reserve, which provide various ecotourism services including organization of field trips on foot, bicycle and horse, observation of wild animals and plants, bird-watching, visits to historical-cultural sites and others.



Erebuni State Reserve

Established:	1981
Area:	89 ha
Location:	Kotayk Marz
Altitude:	1300 - 1400 m above sea level

■ **Aim of establishment, protection objects:** Protection of mountainous xerophyllous endemic species and unique natural complexes. In spite of its small territory, it is one of the most important protected areas as it protects the unique genetic fund of wild cereals in the world. The reserve is a habitat for 293 species of high vascular plants, of which about 40 are wild relatives of cultivated plants, including 3 out of 4 species of wild wheat known in the world (with more than 100 varieties), numerous species of rye, barley and aegilops, a number of other rare and threatened species. The reserve is a habitat for about 90 species of vertebrate animals.



“Erebuni” Reserve
© N. Khanjyan

Shikahogh State Reserve

Established:	1958
Area:	12137 ha
Location:	Syunik Marz
Altitude:	700 - 2400 m above sea level

■ **Aim of establishment, protection objects:** Protection of oak-hornbeam forests with typical plant and animal associations, yew and plane groves, Caucasian leopard, Bezoar goat, brown bear, Caucasian black grouse, Caspian snowcock, Armenian viper and other species. The reserve is a habitat for 1074 species of vascular plants and 208 species of vertebrate animals, including 8 registered in the IUCN Red List.

■ **Forests:** Oak and hornbeam forests, oak-hornbeam mixed forests in association with other species, the only small forest of oriental beech in the southern Armenia, groups or separate trees of yew and oriental plane, wonderful intact oak forest in Mtnadzor gorge on the right bank of the River Tsav.

■ **Ecotourism opportunities:** There is a Visitor Center located in the administrative building of the reserve, which provides various ecotourism services including organization of field trips on foot, bicycle and horse, observation of wild animals and plants, bird-watching, visits to historical-cultural sites and others.



“Shikahogh” Reserve
©WWF-Armenia / A. Khoyetsyan

NATIONAL PARKS

Arpi Lake National Park

Established:	2009
Area:	21179 ha
Location:	Shirak Marz
Altitude:	1500 - 3100 m above sea level

■ **Aim of establishment, protection objects:** Protection of biodiversity, meadow-steppe, sub-alpine meadow and wetland ecosystems of Javakhq-Shirak Plateau and Lake Arpi basin, breeding and resting sites of migratory birds, natural monuments. The national park is a habitat for 670 species of vascular plants, including a number of endemics of the Caucasus and Armenia, as well as 255 species of vertebrate animals, including more than 10 species registered in the IUCN Red List (otter, European marbled polecat, Darevski's viper and others). It is the habitat for the biggest colony of Armenian gull in the world and the only breeding site of Dalmatian pelican in Armenia. It is the only habitat of Darevski's viper in the world.



“Arpi Lake” National Park
©WWF-Armenia / A.Malkhasyan



“Arpi Lake” National Park
©WWF-Armenia / A. Malkhasyan

- **Forests:** Plantations of pine and poplar, natural poplar stand in the Akhuryan River gorge, small juniper stands, bush areas and others.
- **Ecotourism opportunities:** The national park has a Visitor Center in the neighbouring Ghazanchi community and a Guest House in Berdashen community nearby the administrative building of the national park. The Visitor Center provides various ecotourism services including organization of field trips on foot and horse, bird-watching, skiing opportunity and others.

Dilijan National Park

Established:	2002 (on the basis of “Dilijan” State Reserve established in 1958)
Area:	33765 ha
Location:	Tavush Marz
Altitude:	1070 - 2400 m above sea level

■ **Aim of establishment, protection objects:** Protection of beech and oak mesophilous forests, unique yew stand, Caucasian black grouse, brown bear and other species as well as natural and historical-architectural monuments. The national park is a habitat for 977 species of high vascular plants, including 5 endemics of Armenia as well as more than 220 species of vertebrate animals.

■ **Forests:** Mesophilous oak, beech and hornbeam forests, mixed oak, beech and hornbeam forests in association with other species, islands of pine and juniper forests, separate yew trees and others.

■ **Ecotourism opportunities:** There is a Visitor Center nearby the administrative building of the national park, which provides various ecotourism services including organization of field trips on foot, bicycle and horse, observation of wild animals and plants, bird-watching, visits to historical-cultural sites and others.



“Dilijan” National Park, Lake Parz
©Dilijan National Park

Sevan National Park

Established:	1978
Area:	147456 ha (22697 ha without the Lake Sevan)
Location:	Gegharkunik Marz
Altitude:	2000 m above sea level

■ **Aim of establishment, protection objects:** Protection of an important high mountainous lake ecosystem, endemic fish species (Sevan trout, Sevan beghlou, Sevan koghak), plants and animals, including endemic Armenian gull, resting sites of migratory waterfowl and others. The national park is a habitat for 1145 species of high vascular plants (including 3 endemics of Armenia and 5 endemics of Lake Sevan) as well as for 336 species of vertebrate animals.

■ **Forests:** Remnant oak and juniper open woodlands in association with xerophilous bushes and steppe plants, bush areas; plantations (pine, sea-buckthorn, poplar and others) on the areas previously covered by water, which are gradually getting covered by water as the lake level raises.

■ **Ecotourism opportunities:** On the territory of the national park various ecotourism services are provided, including organization of field trips on foot, bicycle and horse, observation of wild animals and plants, bird-watching, visits to historical-cultural sites and others.



Arevik National Park

Established:	2009
Area:	34401 ha, including “Boghaqar” Sanctuary
Location:	Syunik Marz
Altitude:	650 - 3000 m above sea level

■ **Aim of establishment, protection objects:** Protection of landscape and biological diversity, endemic, rare and threatened species, their habitats, natural-historical heritage of “Boghaqar” Sanctuary, Meghri typical mountainous floristic region, Meghri and Zangezur mountainous ranges; conservation of Caucasian leopard, Bezoar goat, Armenian mouflon, brown bear, otter, Caspian snowcock, Caucasian black grouse, Armenian viper and other species. The national park is a habitat for more than 1500 species of high vascular plants, of which 31 endemics, 92 registered in the Red Book of Armenia and 6 in IUCN Red List. It is a habitat for 245 species of vertebrate animals, including 11 registered in the IUCN Red List.

■ **Forests:** Juniper open woodlands, oak forests and open woodlands, hornbeam, maple, ash and other species also occur.

■ **Ecotourism opportunities:** On the territory of the national park various ecotourism services are provided, including field trips on foot and horse (horses can be rented from the neighboring communities), observation of wild animals and plants, bird-watching, visits to historical-cultural sites and others.



“Arevik” National Park
©WWF-Armenia / A. Malkhasyan

STATE SANCTUARIES

Zikatar Sanctuary

Established:	2010
Area:	150 ha
Location:	Tavush Marz
Altitude:	1150 - 1450 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of natural forest ecosystems, landscape and biological diversity.
- **Ecotourism opportunities:** There is a Visitor Center in the sanctuary, which provides various ecotourism services including organization of field trips on foot, bicycle and horse, observation of wild animals and plants, bird-watching, visits to historical-cultural sites and others.

Gyulagarak Sanctuary

Established:	1958
Area:	2576 ha
Location:	Lori Marz
Altitude:	1400 - 1900 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of pine forest (there are 130-150 year old trees), valuable tree species and rare forest plants.

Ijevan Sanctuary

Established:	1971
Area:	5908 ha
Location:	Tavush Marz
Altitude:	900 - 2100 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of rare and valuable forest animals.

Arjatkhlenti Hazel-Nut Sanctuary

Established: 1958
Area: 40 ha
Location: Tavush Marz
Altitude: 1500 - 1800 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of relict hazel-nut (*Corylus colurna L.*) and yew (*Taxus baccata L.*) groves.

Gandzaqar-Verin Aghdan Sanctuary

Established: 1971
Area: 6813 ha
Location: Tavush Marz
Altitude: 1500 - 2000 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of mountainous forests, rare and valuable forest species.

Margahovit Sanctuary

Established: 1971
Area: 2814 ha
Location: Lori Marz
Altitude: 1900 - 2200 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of forest animals.

Hanqavan Hydrological Sanctuary

Established: 1981
Area: 5202 ha
Location: Kotayk Marz
Altitude: 2000 - 2300 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of "Hanqavan" mineral water catchment basin.

Caucasian Rose-Bay Sanctuary

Established: 1959
Area: 761 ha
Location: Lori Marz
Altitude: 1900 - 2200 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of Caucasian Rose-Bay.

Akhnabat Yew Grove Sanctuary

Established: 1959
Area: 25 ha
Location: Tavush Marz
Altitude: 1400 - 1700 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of the unique relict yew grove.

Getik Sanctuary

Established: 1971
Area: 5728 ha
Location: Gegharkunik Marz
Altitude: 1500 - 2700 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of mountainous forests and rare and valuable forest animals.

Arzakan-Meghradzor Sanctuary

Established: 1971
Area: 13532 ha
Location: Kotayk Marz
Altitude: 1600 - 2100 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of rare and valuable forest animals.

Bank's Pine Sanctuary

Established:	1959
Area:	4 ha
Location:	Kotayk Marz
Altitude:	1800 - 2000 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of the unique Bank's pine stand.

Aragats Alpine Sanctuary

Established:	1959
Area:	300 ha
Location:	Aragatsotn Marz
Altitude:	3200 - 3350 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of the Lake Qare and surrounding alpine meadows.

Juniper Open Woodland Sanctuary

Established:	1958
Area:	3312 ha
Location:	Gegharkunik Marz
Altitude:	2000 - 2300 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of juniper and oak open woodlands, typical plant and animal associations.

Ararat Vordan Karmir Sanctuary

Established:	1987
Area:	219 ha
Location:	Armavir Marz
Altitude:	850 - 1000 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of the insect *Porphyrophora hamelii* and typical semi-desert vegetation, unique plant associations.



Khor Virap Sanctuary

Established:	2007
Area:	50 ha
Location:	Ararat Marz
Altitude:	800 - 900 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of wetland ecosystems with typical plant and animal species.

Goravan Sands Sanctuary

Established:	1959
Area:	95 ha
Location:	Ararat Marz
Altitude:	1100 - 1200 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of the sandy ecosystem, unique plants and animals.

Yeghegis Sanctuary

Established: 1971
Area: 4200 ha
Location: Vayots Dzor Marz
Altitude: 1200 - 2800 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of rare and valuable animal species, wild wheat.

Jermuk Hydrological Sanctuary

Established: 1981
Area: 17371 ha
Location: Vayots Dzor Marz
Altitude: 1900 - 2100 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of "Jermuk" mineral water catchment basin.

Jermuk Forest Sanctuary

Established: 1958
Area: 3865 ha
Location: Vayots Dzor Marz
Altitude: 1100 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of mountainous forests and rare animals.

Her-Her Open Woodland Sanctuary

Established: 1958
Area: 6139 ha
Location: Vayots Dzor Marz
Altitude: 1400 - 2000 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of relict juniper open woodlands and tragacanth vegetation.

Sev Lich Sanctuary

Established:	2001
Area:	240 ha
Location:	Syunik Marz
Altitude:	2658 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of high mountainous lake of volcanic origin, surrounding plant and animal associations, alpine meadows.

Goris Sanctuary

Established:	1972
Area:	1838 ha
Location:	Syunik Marz
Altitude:	1400 - 2800 above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of forest ecosystems, threatened plants and animals.



“Zangezur” Sanctuary
©WWF-Armenia / A. Malkhasyan

Zangezur Sanctuary

Established: 2009
Area: 17368 ha
Location: Syunik Marz
Altitude: 2100 - 3900 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of landscape and biological diversity of sub-alpine meadows and meadow-steppe ecosystems, rare and threatened plants and animals.

Boghaqar Sanctuary

Established: 1989
Area: 2728 ha
Location: Syunik Marz
Altitude: 1400 - 2100 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of endemic and rare species of plants and animals.

Plane Grove Sanctuary

Established: 1958
Area: 64 ha
Location: Syunik Marz
Altitude: 700 - 750 m above sea level

- **Aim of establishment, protection objects:** Protection of the only in the Caucasus natural plane (*Platanus orientalis* L.) grove.

FORESTS OF ARMENIA

The areas covered by forests in Armenia are limited, which is conditioned by geographic location of the country, natural-climatic conditions, human activity and other factors. At present the forest lands in Armenia make 344,2 thousand ha including 277,1 thousand ha of forested areas. In the result of negative impact of natural factors and overexploitation the forest ecosystems were significantly damaged.

The mountainous forests of Armenia have crucial role for soil and water protection as well as regulation of climate. They are of big socio-economic significance. The forests of Armenia have high scientific value and rich biodiversity.

The forests in Armenia are mainly distributed in the northern and southern areas of the country. There are almost no forests in the central Armenia just with some forests represented by separate patches or dry open woodlands.

Broad-leaf forests dominate in Armenia with beech, oak and hornbeam as the main forest species. They form homogenous forests as well as mixed forests in association with other forest species.

In Armenia forests are distributed at the altitudes of 500 - 2400 m above sea level. Four main types of forests can be described. Oak forests are widely distributed in Armenia; the associated species are ash, hornbeam, maple, elm and others. Beech forests with prevalence of oriental beech are also widely distributed especially in the northern Armenia at the altitudes of 1000 - 2100 m above sea level; associated species are lime tree, euonymus and other species. Hornbeam forests are less common, mainly at the altitudes of 800 - 1800 m above sea level; the main associated species are maple, elm, pear, apple and others. Dry open woodlands are distributed both in the northern (900 - 1000 m above sea level) and southern (1800 - 2000 m above sea level) Armenia; they are represented by xerophilous trees and bushes, for example, various species of juniper.

References

1. “Arpi Lake” National Park, Management Plan, 2011-2015.
2. Biodiversity of Armenia, First National Report, 1999.
3. “Dilijan” National Park, Management Plan 2001-2011.
4. Gevorgyan A., Aghasyan A., “Current State of the Specially Protected Nature Areas of Armenia”, Yerevan, 2008.
5. “Khosrov Forest” State Reserve Management Plan, 2010-2014.
6. National Forest Programme of the Republic of Armenia, 2005.
7. N.Khanjyan, Specially Protected Nature Areas of Armenia, 2004.
8. “Reserves of the Caucasus”, Moskva, “Misl”, 1990.
9. “Sevan” National Park, Management Plan, 2007-2011.
10. “Shikahogh” State Reserve, Draft Management Plan, 2009.
11. The Red Book of Animals of the Republic of Armenia (Invertebrates and Vertebrates). Second edition, 2010, Yerevan.
12. The Red Book of Plants of the Republic of Armenia (Higher Plants and Fungi). Second edition, 2010, Yerevan.
13. WWF-Armenia, N.Khanjyan, “Forest Gifts of the Northern Armenia”, 2012.
14. WWF-Armenia, N.Khanjyan, “Khosrov Forest Reserve”, 2009.
15. www.hayantar.am

About ENPI FLEG Program

The ENPI FLEG Program supports governments of participating countries, civil society and the private sector in the development of sound and sustainable forest management practices, including the prevention of illegal forestry activities. Participating countries include Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova, Russia and Ukraine. This Program is funded by the European Union with a contribution from the Austrian Development Cooperation.

www.enpi-fleg.org

Project Partners



European Commission

The European Union is the world's largest donor of official development assistance. EuropeAid Development and Cooperation, a Directorate General of the European Commission, is responsible for designing European development policy and delivering aid throughout the world. EuropeAid delivers aid through a set of financial instruments with a focus on ensuring the quality of EU aid and its effectiveness. An active and proactive player in the development field, we promote good governance, human and economic development and tackle universal issues, such as fighting hunger and preserving natural resources.

www.ec.europa.eu



Austrian Development Cooperation

The Austrian Development Cooperation (ADC) supports countries in Africa, Asia and Central America as well as in South Eastern and Eastern Europe in their sustainable social, economic and democratic development. The Foreign Ministry (FMEIA) plans ADC strategies and programmes. The Austrian Development Agency (ADA), the operational unit of ADC, implements these together with public institutions, non-governmental organisations and enterprises.

www.entwicklung.at



World Bank

The World Bank is a vital source of financial and technical assistance to developing countries around the world. Our mission is to fight poverty with passion and professionalism for lasting results and to help people help themselves and their environment by providing resources, sharing knowledge, building capacity and forging partnerships in the public and private sectors.

www.worldbank.org



IUCN

IUCN, International Union for Conservation of Nature, helps the world find pragmatic solutions to our most pressing environment and development challenges. IUCN is the world's oldest and largest global environmental organization, with more than 1,200 government and NGO members and almost 11,000 volunteer experts in some 160 countries. IUCN's work is supported by over 1,000 staff in 45 offices and hundreds of partners in public, NGO and private sectors around the world.

www.iucn.org



WWF

WWF is one of the world's largest and most respected independent conservation organizations, with almost 5 million supporters and a global network active in over 100 countries. WWF's mission is to stop the degradation of the earth's natural environment and to build a future in which humans live in harmony with nature, by conserving the world's biological diversity, ensuring that the use of renewable natural resources is sustainable, and promoting the reduction of pollution and wasteful consumption.

www.panda.org



